ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1732 - Ա **30 մարտի 2009թ.**

Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԶԱՆ ԶՈՀՐԱԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՏԻՐԱՆ ԵՂՅԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ԵՊՐԱՔՍՅԱ ԼԵՎՈՆԻ ՂԱՍԱԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռուզան Զոհրաբի Սարգսյանի (ծնված 29.05.1968թ.), Տիրան Եղյայի Սարգսյանի (ծնված 08.10.1970թ.), Եպրաքսյա Լևոնի Ղասաբյանի (ծնված 01.05.1941թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ա. Տիգրանյան փողոցի նրբանցքի հ.10 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1327քմ, որից 1100քմ մակերեսով հողամասը Ռուզան Զոհրաբի Սարգսյանին, Տիրան Եղյայի Սարգսյանին, Եպրաքսյա Լևոնի Ղասաբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 227քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1999 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 14.01.2008թ. հ.44ա, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/142 գրությունները, 14.05.1999թ., 05.04.2000թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 13.06.2008թ. հ.1234/02 գործի վճիռը, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 12.03.2009թ. հ.20-Ել-1692 եզրակացությունը, համաձայն որի Ա.Տիգրանյան փողոցի նրբանցքի հ.10 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ա. Տիգրանյան փողոցի նրբանցքի հ.10 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռուզան Զոհրաբի Սարգսյանի, Տիրան Եղյայի Սարգսյանի,

Եպրաքսյա Լևոնի Ղասաբյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1100քմ մակերեսով հողամասին կից 227քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 227քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Ա.Տիգրանյան նրբանցքի հ.10 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Ա.Տիգրանյան փողոցի նրբանցքի հ.10 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռուզան Զոհրաբի Սարգսյանի, Տիրան Եղյայի Սարգսյանի, Եպրաքսյա Լևոնի Ղասաբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**